

Համաձայն «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
 Վարչության 11.10.2023թ. որոշման
 Գործում է 01.11.2023 թվականից

ABB-ԲԻՉՆԵՍ+

Եվրոպական Ներդրումային Բանկի կողմից ֆինանսավորվող վարկային ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր և չվերականգնվող վարկային գծեր

1	Պայմաններ	Վարկ	Վարկային գիծ
1.1	Արժույթ	ՀՀ դրամ	
1.2	Տարեկան անվանական տոկոսադրույք	10.4%	
1.3	Զօգտագործված մասի նկատմամբ հաշվեգրվող տոկոսադրույք	-	0-2%
1.4	Պարտավորություն/ գրավ հարաբերակցություն	<ul style="list-style-type: none"> Ավանդային և բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների մինչև 100%-ի չափով, ընդ որում՝ նույն արժույթի դրամական միջոցների՝ մինչև 100%-ի չափով, տարբեր արժույթների դեպքում՝ մինչև 95%-ի չափով, Անշարժ գույքի դեպքում՝ մինչև 70%-ի չափով, Շարժական գույքի դեպքում՝ մինչև 50%-ի չափով, Ապրանքանյութական պաշարների դեպքում՝ մինչև 30%, սակայն տվյալ գրավատեսակի մասնաբաժինը առաջարկվող գրավի կառուցվածքում չի կարող գերազանցել 30%, Դրամական հոսքերի դեպքում՝ ոչ ավելի, քան բանկային հաշիվներով իրականացվող վերջին 12 ամիսների միջին ամսական զուտ կրեդիտային շրջանառության 50 տոկոսի չափով: Տվյալ գրավատեսակի մասնաբաժինը առաջարկվող գրավի կառուցվածքում չի կարող գերազանցել 80%: Միջին ամսական զուտ կրեդիտային շրջանառությունը հաշվարկվում է վերջին 12 ամսվա կտրվածքով, իսկ 12 ամսից պակաս Բանկի հաճախորդ լինելու պարագայում՝ վերջին 6 ամսվա կտրվածքով: 	
1.5	Ժամկետ	24-90 ամիս	
1.6	Արտոնյալ ժամկետ	Առավելագույնը՝ 2 տարի	
1.7	Մարման եղանակ	Տոկոսները՝ ամենամսյա, մայր գումարի մարումները՝ կախված բիզնեսի առանձնահատկություններից	
1.8	Գումար	10,000,000 -500,000,000 ՀՀ դրամ	
1.9	Վաղաժամկետ մարման տույժ, տուգանք	Չի կիրառվում	
2	Բանկի միջնորդավճար		
2.1	Դիմում-հայտի ուսումնասիրության միջնորդավճար	0 ՀՀ դրամ	

2.2	Սպասարկման միջնորդավճար	0 ՀՀ դրամ
2.3	Վարկային միջոցների կանխիկացման միջնորդավճար	Համաձայն հաշվից միջոցների կանխիկացման Բանկում գործող սակագների
3	Ապահովվածություն	
3.1	Գրավի առարկա	Ավանդային և բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներ, անշարժ և շարժական գույք, հիմնական միջոցներ, երաշխիքներ և երաշխավորություններ, արժեթղթերի գրավ, բաժնետոմսի գրավ, բաժնեմասի գրավ, փայի գրավ, դրամական հոսքեր (դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունք), շրջանառու միջոցներ, իրավունքի գրավ, խառը գրավ և Բանկի կողմից ընդունելի այլ գրավ:
3.2	Լրացուցիչ պայման	Բնակելի նշանակության անշարժ գույքի գրավադրման ժամանակ Գրավատուն ներկայացնում է սեփականության իրավունքի ծագման հիմքերը, և եթե դրանք Գրավատուին են փոխանցվել նվիրատվության գործարքի հիման վրա և սեփականությունը փոխանցվել է Վարկի ստացման վերաբերյալ դիմում-հայտի ներկայացնելուն նախորդող հինգ տարվա ընթացքում, ապա. 1. պահանջվում է լրացուցիչ ապահովվածություն՝ նվիրատուի երաշխավորություն, ընդ որում տրամադրվող վարկի գումարը չի կարող գերազանցել գրավի գնահատված լիկվիդային արժեքի 50%-ը, կամ 2. պահանջվում է լրացուցիչ ապահովվածություն՝ երրորդ անձի երաշխավորություն, ընդ որում վարկի գումարը չի կարող գերազանցել գրավի գնահատված լիկվիդային արժեքի 25%-ը: * սույն ենթակետը կիրառելի չէ, եթե Վարկի ստացման վերաբերյալ դիմում-հայտի ներկայացման պահին նվիրատուն մահացած է:
3.3	Պարտադիր պայման	<ul style="list-style-type: none"> ✓ Իրավաբանական անձ հաճախորդների դեպքում՝ մասնակցի (մասնակիցների) 100% բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի պարտադիր գրավադրում: ✓ Իրավաբանական անձ հաճախորդների դեպքում՝ 10% և ավել բաժնետոմս, բաժնեմաս, փայ ունեցող մասնակցի (մասնակիցների) կողմից երաշխավորության պարտադիր տրամադրում:
4	Գրավի գնահատում և ապահովագրություն	
4.1	Գրավի արժեքի գնահատում	Անշարժ և շարժական գույքերի, հիմնական միջոցների, շրջանառու միջոցների գնահատումը իրականացվում է Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերությունների կողմից: Արժեթղթերի, Բանկի կողմից ընդունելի այլ գույքերի և իրավունքի գնահատումը իրականացվում է Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերությունների կողմից՝ ըստ անհրաժեշտության:
4.2	Ապահովագրություն	Ըստ անհրաժեշտության
5	Վարկառուի նկատմամբ պահանջներ	
5.1	Վարկառու	ՀՀ-ում գրանցված՝ գյուղատնտեսության, գյուղ. վերամշակման, զբոսաշրջության, արտահանման խթանման և արդյունաբերության ոլորտներում գործունեություն իրականացնող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր
5.2	Վարկառուին ներկայացվող պահանջներ	1. Կայուն դրամական հոսքերի առկայություն. 2. Վերջին 12 ամիսների ընթացքում վարկային պարտավորությունների գծով ընդհանուր ժամկետանց օրերի քանակ՝ ոչ ավել, քան 30 օր (եթե Վարկառուի

		գործունեության ժամկետը 1 տարուց պակաս է, ապա վարկային պարտավորությունների գծով ժամկետանց օրերի քանակը չպետք է գերազանցի փաստացի գործունեության օրվանից սկսած յուրաքանչյուր ամսվա համար 2 օրը՝ կուտակային սկզբունքով):
5.3	Լրացուցիչ պայման	Վարկառուի ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքում ստացվող ֆինանսական ցուցանիշները պետք է բավարարեն Բանկի պահանջներին:
6	Երաշխավորի նկատմամբ պահանջներ	
6.1	Երաշխավոր	ՀՀ-ում կամ ԱՀ-ում գրանցված ռեզիդենտ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, ֆիզիկական անձ
6.2	Երաշխավորին ներկայացվող պահանջներ	<ul style="list-style-type: none"> • Առնվազն 6 ամսվա անընդմեջ գործունեություն ծավալած իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր և 21-63 տարեկան ֆիզիկական անձ. • Ժամկետանց պարտավորությունների բացակայություն (ներառյալ տրամադրված երաշխավորությունների գծով). • Նախորդ 12 ամիսների ընթացքում վարկային պարտավորությունների գծով ընդհանուր ուշացրած օրերի քանակը չպետք է գերազանցի 30 օրը (ներառյալ տրամադրված երաշխավորությունների գծով), (եթե Երաշխավորի գործունեության ժամկետը 1 տարուց պակաս է, ապա վարկային պարտավորությունների գծով ժամկետանց օրերի քանակը չպետք է գերազանցի փաստացի գործունեության օրվանից սկսած յուրաքանչյուր ամսվա համար 2 օրը՝ կուտակային սկզբունքով):
7	Լրացուցիչ պայմաններ	
7.1	<p>Մինչ 31.10.2023թ. ներառյալ տրամադրված դրամական պարտավորությունների դեպքում՝</p> <ul style="list-style-type: none"> • Ժամկետանց տոկոսների գծով Բանկը Վարկառուից գանձում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար ժամկետանց գումարի 0,13%-ի չափով, • Դրամական պարտավորությունը պայմանագրով նախատեսված ժամկետներում չմարվելու դեպքում պայմանագրով նախատեսված տոկոսների հաշվարկը դադարում է և այդ օրվանից ժամկետանց գումարի նկատմամբ մինչև ժամկետանց պարտքի փաստացի կատարման օրը հաշվարկվում են տոկոսներ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով, <p>01.11.2023 թվականից տրամադրված դրամական պարտավորությունների դեպքում՝</p> <p>Բանկն իրավունք ունի՝</p> <ul style="list-style-type: none"> • Ժամկետանց վարկի նկատմամբ շարունակել կիրառել Պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը: • Կիրառել տույժ՝ ժամկետանց տոկոսագումարի և ժամկետանց գումարի նկատմամբ 0.13%-ի չափով ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար: 	